ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2023թ. թիվ 713-Ա

Կ.ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1419-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված պետական միասնական գրանցամատյանից առ 13.11.2023թ. քաղվածքը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Սարիբեկյանի հետ 2021 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2023 թվականի նոյեմբերի 13-ից:

2. «ՀՀ Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Կարինե Սարիբեկյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

17/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր